նորա երթայք։ Վասն որոյ զխաներն փակեաց ի քա-
ղաքիս, զի ի դուրս նստցին ի քաղաքէս։ Եւ ընդ ա-
ւուրսն հաղար արանց կամ երկուց եկին ի Հասանէն և
մտին ի տունս Հայոց և Տաճկաց յՈւսկիւտ[ար], իբր
ասել առ վէզիրն թէ Ահա՛ հազիւ պրծաք ի նմանէ։ Եւ
վէզիրն մեղադրէր, և նոքա ասեն. Ո՛վ տէր, եթէ ոչ
լեալ էաք ընդ նմա, զմեզ ի սուր անցուցանէր. յեր-
կիւղէ եղաք առ նա։ Եւ կալաւ զգլխաւորս նոցին և
սպանանէր անդ։ Եւ տեսեալ զօրացն՝ զիմամարտեցան
ի մէջ բանակին և ձգեցին ի վէզիրէն արս քսան կամ Լ,
և փախեան ի լերինս, զի չունէին երես և առ Հա-
սանն։ Եւ զայս տեսեալ վէզիրին՝ իսկոյն մարդ հա-
սուցեալ յամենայն ճանապարհս լերանց՝ ըմբռնէին,
բերէին, սպանանէին յամենայն աւուր բազում արանց
ի մէջ բանակին։ Եւ իբրև զարշէին ի գիշոց նոցին և
յարենէ, մեծամեծ խորս և փոսս փորեալ բազում՝
անդր լնէին եւ ծածկէին։ Զայս լուեալ Հասանին՝
փութանակի առաքէ զօրս յիւրոց, որ էր գլուխ որ-
դեգիր Իփշիրին, եկեալ մերձ յԻզնիմիտ, որ կային
անդ Դ փաշայք, զորս վէզիրն առաքեալ էր ման-
սուպին իւրեանց երթալ. Եւ Բ պատճառ զի զօրք
առաքեաց՝ եթէ մտանել կարիցեն ի վերայ Հասանին,
փորձելով զզօրութիւն նորին։ Վասն այսորիկ իմա-
ցեալ և Հասանին առաքեաց զլաճ Իփշիրին, զի զա-
մենեսեան զփաշայս ընդ զօրօքն ի սուր անցուցանէր,
մինչև ի փախելոցն բողոք բարձեալ աղաղակաւ ան-
կան ի բանակ վէզիրին թէ Այս ինչ գործեցաւ։ Եւ
եղև կրկին վէրք մեծ վէզիրին և ցամաքեցաւ արիւն
սրտին, և ետ ձայնել ի քաղաքս և ի բոլորն թէ Սէ-
ֆէր ունիմ. և խորհէր հնարէր՝ թէ զի՛նչ արասցէ։
Եւ յետ սակաւ աւուրց այն լինելոյ, եկն յայսկոյս՝
մտանելով ի քաղաքս և առնէր տիւան և ի գործ իւր։
Եւ Հասանն եւս եւ ամենայն փաշայք ընդ նմա